72

ՈՐՈՇՈՒՄ

Մշակութաբանական փորձաքննություն նշանակելու մասին

03/07/2018 թ. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժին ավագ քննիչ Ա.Բ.Վարդանյանս, քննարկելով թիվ 10189218 քրեական գործի նյութերը, ՀՀ ոստիկանության Մաշտոցի բաժնի կողմից հարուցված

ՊԱՐԶԵՑԻ

2018 թվականի հուլիսի 03-ին՝ ժամը 20:30-ի սահմաններում Արսեն Հարեյանը գնալով Երևան քաղաքի Էստոնական 12/1 շենք, փորձել է շենքի պատերին փակցնել իր նախկին ընկերուհու՝ նույն շենքի թիվ 92-րդ բնակարանի բնակչուհի՝ Լարիսա Սուրիկի Զանոյանի սեռական ակտի անատոմիական, ֆիզիոլոգիական մանրամասներ պարունակող լուսանկարները, սակայն Լ. Զանոյանն ու նրա դուստր Քրիստինե Խաչատրյանը շենքի բակում պատահական նկատել են Ա.Հարեյանի գործողությունները և փորձել կանխել դրանք, որի ընթացքում վերջիններիս միջև առաջացել է վիճաբանություն: Վիճաբանության ժամանակ Արսեն Հարեյանը բազմաթիվ հարվածներ է հասցրել Քրիստինե Խաչատրյանին և Լ.Զանոյանի մարմնի տարբեր հատվածներին՝ պատճառելով ֆիզիկական ցավ:

Նախապատրաստված նյութերով նշանակվել է դատաբժշկական փորձաքննություն և համաձայն փորձաքննության թիվ 1281 եզրակացությանը՝ Լ.Զանոյանին պատճառվել է թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածքներ՝ գույգ բազուկոսկրերի, աջ նախաբազկի շրջանների արյունազեղումների ձևով, իսկ համաձայն թիվ 1282 եզրակացությանը Ք.Խաչատրյանի մոտ փորձաքննության պահին մարմնական վնասվածքի օբեկտիվ հատկանիշներ չեն հայտնաբերվել:

2018 թվականի հուլիսի 09-ին ՀՀ ոստիկանության Մաշտոցի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով և 34-263-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 10189218 քրեական գործը:

2018 թվականի հուլիսի 10-ին թիվ 10189218 քրեական գործը ուղարկվել է Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների քննչական բաժին հետագա ընթացքը լուծելու նպատակով:

2018թվականի հուլիսի 12-ին թիվ 10189218 քրեական գործի նախաքննության կատարումը հանձնարարվել է ինձ:

Քրեական գործի նախաքննության ընթացքում Լարիսա Սուրիկի Զանոյանը ներկայացրել է սեռական ակտի անատոմիական, ֆիզիոլոգիական մանրամասներ պարունակող լուսանկարները, որոնք Արսեն Հարեյանը ցանկացել է տարածել իրենց շենքի և խանութների պատերին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 244-րդ հոդվածի պահանջներով .

ՈՐՈՇԵՑԻ

1. Նշանակել մշակութաբանական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ,,Մշակութային արժեքների փորձաքննություն,, ՊՈԱԿ-ին՝ փորձագետին նախազգուշացնելով ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:
2. Փորձագետին առաջադրել հետևյալ հարցերը՝ փորձաքննության ներկայացված լուսանկարները հանդիսանում է արդյոք պոռնկագրական բնույթի, թե ոչ:
3. Փորձագետին իրավունք վերապահել պատասխանելու այնպիսի հարցերի, որոնք թեև չարտադրված չեն որոշման մեջ, սակայն կարող են բխենալ էական նշանակություն:
4. Փորձագետին ներկայացնել սույն որոշումը և լուսանկարը՝ փաթեթավորված ու կնիքված թիվ 081 կնիքով:

Մեկուսացված քննիչ՝ Ա.Բ.Վարդանյան